

100



# ՀՅԱ ՀԱՍՎՐՈՒՄ

- 2 Իրան-Հայաստան միջկառավարական համատեղ յանձնաժողովի 10-րդ նիստը  
Լեռն Ահարոնեան**
- 4 Հեքիաթ գևալ-չգնայու մասին  
Կոլիա Տէր Յովիաննիսեան**
- 5 Հայաստան՝ Վերջապէս երկխօսութիւն**
- 14 Յովիաննես Թումանեանի առաջին գրքի հրատարակիչը  
Նիկիտ Սիրզայեանց**
- 16 Դոկտոր Գեր Գեւորգեանի մահը**
- 17 Ալբերտ Բեգանեանի  
բնմադրութեամբ-դերակատարութեամբ  
թատրոն  
Ո.Ս.**
- 18 Սպիտակ Խապաստակ, կարմիր Խապաստակ (Խատուած)  
Նասիմ Սոլէյմանփիուր**
- 20 Ֆոտոշապի իրաշըները**
- 22 Մրգով մածունի աղանդներ**
- 23 Մարզանը  
Արման Ստեփանեան**

Մշակութային և Հասարակական



Երկշաբաթերը

Ե տարի, թիւ 100, Յունիս 15, 2011,  
1200 բուման  
Հայաստանում 320 դրամ



## «Յոյս»-ի 100-րդ համարը

- 8 Հարցագրոյց թերթի արտոնատեր  
Լեռն Ահարոնեանի հետ**
- 10 «Յոյս»-ի աշխատակազմը**
- 12 «Յոյս»-ի առաջին հարիւր համարները  
Նորվան**
- 13 «Յոյս»-ի առաջին հարիւր համարները  
Շանթ Բաղրամեան**

## Պարսկերւ բաժիններ

|   |   |  |
|---|---|--|
| <b>2 Հայերէն բաժնում</b>  | <b>6 Սամաստի հայ կանայք</b>             | <b>10 Անի՝ Հազար ու մի եկեղեցիների քաղաք</b> |
| <b>4 Իրան-Հայաստան միջկառավարական համատեղ յանձնաժողովի 10-րդ նիստը<br/>Լեռն Ահարոնեան</b> | <b>8 Լուսանկարներում</b>                | <b>Գարուն Սարգսեան</b>                       |
| <b>8 Արամայիս Աղամալեան՝ իրանական սինեմայի մենակեաց մարզը</b>                             | <b>13 Գաղթը՝ աշխարհի մշտական խնդիրը</b> | <b>Ժողէֆ Ալֆրէդ Գրինբլար</b>                 |

### Յոյս

Հասարակական-մշակութային  
Երկշաբաթերը

Արտօնատեր՝  
Լեռն Ահարոնեան

Խմբագիր՝  
Որերը Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Քարմէն Ազարեան,  
Լիա Խաչիկեան,  
Գարուն Սարգսեան,

Արմինէ Մելիք-Խորայէլեան

Գեղարւեստական ծեւալորում՝

Լիա Խաչիկեան

Հայերէն բաժնի սրբագրիչ՝  
Քարմէն Ազարեան

Կայք  
Քաջիկ Սաֆարեան

Մարզական  
Արման Ստեփանեան

Բաժմնորդագրութիւն  
Քարին Եաղուրի

Հասցէ՝  
Թեհրան, Էնդելար պողոտայ,  
Վալի Սար քաղուղի  
համար 1048  
**66495180 66492693**

Հեռախոս-հեռապատճեն՝  
**66495208**

[hooys@inbox.com](mailto:hooys@inbox.com)  
[www.hooys.com](http://www.hooys.com)

# ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻԶԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՅԱՆՎԱԺՈՂՈՎԻ 10-ՐԴ ՆԻՍԸ

Եւրո Ահարոնեան

Սոյն թականի Մայիսի 29-ին եւ 30-ին Թեհրանում կայացաւ Իրան-Հայաստան միջկառավարական համատեղ յանձնաժողովի 10-րդ նիստը: Շաբաթ, Մայիսի 28-ի երեկոյեան ՀՀ լիազօր դեսպան պրն. Գրիգոր Առաքելեանը հիւրընկալեց 24 հոգուց բաղկացած պատիրակութեան անդամներին: Ես էլ պատիւ ունեցայ մասնակցել այդ հիւրասիրութեանը, որը տեղի ունեցաւ Հայ Ակումբում: Նկատելի էր, որ պատիրակութեան անդամները գլխաւորապէս երիտասարդներ էին, որոնք շատ ազատ ու մտերմիկ կերպով նախարար Արմեն Մովսիսեանի հետ խօսում, խնդիրներ արձարծում ու մտքերի փոխանակութիւն էին կատարում զանազան խնդիրների շուրջ: Այդ օրը քանի որ զուգադիպում էր Մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրման տարեդարձին, պատշաճօրէն նշւեց ու շատ գեղեցիկ արտայայտութիւններ եղան ներկաների կողմից, այնպէս որ ամէն ինչ հոյակապ էր:

Իրան-Հայաստան միջկառավարական յանձնաժողովի նիստերը հերթականօրէն տարին մէկ անգամ կայանում է Թեհրանում եւ Երեւանում: Յանձնաժողովի նիստերի կայացումը ստոյգ ժամկէտ չունի, այլ պարբերաբար տարին մէկ անգամ տեղի են ունենում այս կամ այն երկրում: Նախապէս ճշտած օրակարգի համաձայն, վերջնական քննարկման է ենթարկում կողմերին շահագործող խնդիրները, որոնք գոյութիւն ունեին կամ առաջացել են մէկ տարւայ ընթացքում: Ըստ խնդիրների բովանդակութեան ու ծաւալի, աշխատանքն աւելի արդիւնաւետ դառնալու համար բաժանում է կոմիտէների, որոնք իւրովի զբաղւում են իրենց տրամադրութեանը և պահպանում են իրավունքը կառավարութեան մասին:



տանքով: Պիտի նշել, որ ամէն տարի ժողովից առաջ Իրանի կողմը ստանում է Իրան-Հայաստան Առեւտրական պալատի առաջարկենքը կամ որեւէ հարցում նրա տեսակետները:

Պիտի յայտնեմ, որ այդ միջկառավարական յանձնաժողովները կազմում էր Իրանի Տնտեսական նախարարութեան միջոցով, որովհետեւ նախկինում միայն այդ նախարարութիւնը կառավարութեան կողմից կարող էր ննան խնդիրներ կարգաւորել, սակայն այժմ այդ պարտականութիւնը փոխանցւել է ԻԻՀ Արտգործնախարարութեանը, որա համար էլ յիշեալ յանձնաժողովի նիստերը տեղի են ունենում արտագործնախարարութեան հետազոտութիւնների կենտրոններից մէկում, այս պարագային նիստարանում:

Բացման նիստը կայացաւ Մայիսի 29-ին, կիրակի առաւտեան ժամը 9-ին, որը դեկավարում էին ԻԻՀ Իրանի կողմից Արտգործնախարարի տեղակալ պրն. Անարին, իսկ Հայաստանի կողմից՝ ՀՀ Արտգործնախարարի տեղակալ պրն. Արման Կիրակոսեանը, որն իր արտայայտութիւնների մէջ շեշտեց, թէ մեր էներգիան Իրանի հետ

բարեկամութիւնից է բխում: Ապա կողմերը նախ ներկայացրին նիստին մասնակցող պատասխանատուներին, ապա, ինչպէս ասւեց, աշխատանքը կազմակերպչական առումով եւ սահուն դարձնելու համար կազմեցին 4 կոմիտէներ՝ Էներգետիկա եւ ջուր, գիւղատնեսութիւն, առողջապահութիւն եւ զբուաշրջութիւն, փոխադրութիւն եւ ճանապարհաշինութիւն եւ վերջապէս փաստաթղթերի ստուգում եւ վերջնական մշակում համաձայնագրի տեսքով կողմերի նախարարների միջոցով ստորագրելու համար:

Նախատ մասնակցում էի Առեւտրի եւ զբուաշրջութեան ոլորտում տարրող բանակցութիւններին ու քննարկումներին, որը Իրանի կողմից դեկավարում էր ԻԻՀ Արտգործնախարարութեան արտահանումների զարգացման եւ ՀՀ հետ առեւտրական յարաբերութիւնների պատասխանատու՝ ճարտարագէտ Ասադեանը, իսկ Հայաստանի կողմից ժողովի պատասխանատու էր ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ եւ զբուաշրջութեան պատասխանատու՝ պրն. Արա Պետրոսեանը:

Զգալի էր Իրանի կողմից տար-

բեր ոլորտներում մասնակցող կանանց թիւը, յատկապէս Ստանդարտի, եւ կենտրոնական քանի ներկայացուցիչները, որոնք բարձր հմտութիւն էին դրսեւրում իրենց մասնագիտական ասպարեզում: Աչքի էր զարնում նաեւ հայաստանցի Երիտասարդ ժողովական-ները իրենց պատրաստածութեամբ ու բարձր իմացականութեամբ: Լուրջ վէճեր ու լարած քննարկումներ էր տեղի ունենում կողմերի միջեւ անաշառ ու օրինական կերպով, եւ իրօք պրն. Պետրոսեանը ըստ արժանույն, անտեղիտակի եւ վճռականօրէն պաշտպանեց ՀՅ ազգային շահերը՝ իր կողքին ունենալով հմուտ փորձագէտ պրն. Գագիկ Քոչարեանին: Քննարկումների արդինքում ձեւառութեց մի համաձայնագիր, որն ստորագրւեց ամսի 30-ին, կտօրից յետոյ ժամը 5-ին ԻԻԿ Արտագործնախարար՝ պրն. Ալի Արքար Սալեհիի եւ ՀՅ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար՝ պրն. Արմեն Մովսիսեանի միջոցով:

Համաձայնագրի ստորագրումից առաջ երկու նախարարները առանձին ելոյք ունեցան: Նախարար Սալեհին իր ուրախութիւնը յայտնեց երկու հարեւան երկրների սերտ յարաբերութիւնների եւ անցեալ տարում իրանի ու Հայաստանի միջեւ 38% առեւտրական աճի արձանագրման առթիւ, որն այսօր հասել է 270 միլիոն դոլարի և առեւտրական նակարդակը 7-րդ տեղից հասել է 4-րդի:

Տա ընդգծեց, որ Հայաստանի աշխարհագրական դիրքից օգտւելով պէտք է Հայաստանի տարածքից Պարսից ծոցը միացնել Սեւ ծովին, յաւելով նաեւ, որ Միջնա Ասիայում Թուրքմենստանի, Թաղիկստանի, Ուզբեկստանի եւ Ղազախստանի հետ մի երկարուղային ցանցի կառուցման համաձայնութիւն է ձեռք բերւել, որ եթէ կարողանաք Կովկասն էլ միացնել այդ ցանցին, դա տարածաշրջանի երկրների համար բաւական շա-

հաւետ աշխատանք կը լինի, որի շարունակութիւնը կը գնայ եւ կը միանայ եւրոպական երկրների երկարուղագծերին:

Նա էլեկտրաէներգիայի, բնական եւ նաւթային արտադրութիւններին անդրադառնալով ասաց, որ երկու երկրների մասնագէտների հետազոտութիւնների արդինքում ցանկալի է երկու կողմերն էլ այս բանակցութիւններից օգուտ քաղեն:

Նա այնուհետեւ առաջարկներ ներկայացրեց պետրոքիմիայի, քաղաքաշինութեան, բնակարանաշինութեան, ներգիայի եւ գրոսաշրջութեան ոլորտներում համագործակցութիւն ծաւալելու վերաբերեալ եւ պատրաստականութիւն յայտնեց նախարարի հետ բանակցել իրան Հայաստան բանկային յարաբերութիւնների եւ դրամական փոխանցումների կարեւորութեան մասին:

ՀՅ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարար եւ հմուտ ու փորձառու դիւանագէտ պրն. Արմեն Մովսիսեանը եւս իր ելոյթում նախ շնորհակալութիւն յայտնեց պրն. Սալեհիին բարձր մակարդակի ընդունելութեան, ապա երկու օրուայ ընթացքում երկու երկրների մասնագէտների բափած ջանքերի համար, որի շնորհիլ հնարաւոր եղաւ տարբեր բնագաւառներում եղած հարցերը քննարկել ու համարել եւ արդիւնքը ներկայացնել մի համաձայնագրի տեսքով:

Նա ընդգծեց, թէ ԻԻԿ-ը կարեւոր նշանակութիւն ունի Հայաստանի համար եւ երկու երկրները քաղաքական, տնտեսական եւ հասարակական ոլորտներում սերտ յարաբերութիւններ ունեն, որը դեռ պիտի աւելի զարգանայ: Ապա նշեց, թէ անցեալ տարի Երեւանում տեղի ունեցած յանձնաժողովում փոխադրութեան, առեւտրի եւ Էներգիայի բնագաւառներում համաձայնութիւն ձեռք բերւեց, որի շնորհիլ կառուցում է էլեկտրաէներգիայի 3-րդ գիծը եւ Արքար գետի վրայ

տեղադրւել է էլեկտրականութիւն արտադրող երկու սարքեր (90 մեգավատը իրանին, 80-ը Հայաստանին-Լ.Ա.), ապա նաեւ երկարուղագծի կառուցման մասին նախագծի մշակումը, որը կը ձգի իրանից մինչեւ Բարումի եւ այդպիսով իրանի Պարսից ծոցը կը միացնի Սեւ ծովին:

Նա, ի դէպ, անդրադարձաւ առեւտրական ու զրուաշրջութեան բնագաւառների յարածում զարգացմանը եւ ապա կրկին անգամ շնորհակալութիւն յայտնել պրն. Սալեհիին ու իր անձնակազմին երկու երկրների բարեկամական կապերի սերտացման ուղղութեամբ գործադրած ծիգերի համար:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հեռուստատեսութեան ու մամուլի ներկայացուցիչների հարցազրոյցը, որից յետոյ յանձնաժողովին մասնակցողները հանրակառով կամ անձնական մերենաներով մեկնեցին Դարաբադ՝ պետական բարձրաստիճան հիւրերի ընդունարան, որը գտնւում է սարի լանջում մեծածաւալ ու գեղատեսիլ մի պուրակում:

Այսպիսով աւարտւեց միջկառավարական համատեղ յանձնաժողովի 10-րդ նիստը:

Հայաստանի պատվիրակութիւնը վերադառնալով «Էսպինա» հիւրանոց, պատվիրակութեան իւրաքանչիւրին տրւեց տողերիս հեղինակի «Փորորկուտ կեանքիս օրերը» գրքի ընծայագրւած հայերն լեզուվ երկիաստորեակը:


Ի վերջոյ, պիտի ասել, որ յանձնաժողովն իր առաքելութիւնն աւարտեց բարեյաջող կերպով ու գոհունակութեան զգացումով եւ այդ ամենը, անշուշտ, եւ յատկապէս իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան պրն. Գրիգոր Առաքելեանի, դեսպանորդ պրն. Գառնիկ Բաղալեանի եւ խորհրդական Սուլեյն Գասպարեանի նախանձախնդիր եւ այլ պաշտօնեաների վերաբերմունքի ու եռանդուն ցանքերի շնորհիլ:

**Կ**ար-չկար, մի նորակառոյց բազմայարկ շենք կար բազմաթիւ բնակարաններով, որոնք փողոցից նայելիս, տարրերում էին միայն լուսամուտների վարագոյրների տեսակով եւ գոյնով: Եւ ինչպէս յաճախ պատահում է նման պարագաներում, շենքի բնակիչները, վարագոյրների պէս, իրար հետ այնքան էլ ներդաշնակ չէին, բայց բանը երբեք չէր հասնում լուրջ գժութիւնների, որովհետեւ ազգակից էին, եւ առաջնորդում էին ընդհանուր փոխըմբռնման եւ համաձայնութեան գիտակցութեամբ: Փոքրերին իրար կապող խաղն էր, պատանիներին եւ աւելի մեծներին՝ դասերը, նորաձեւութիւնը, համակարգիչը եւ սէրը: Ծնողները պատահած առիթով հերթով հաւաքում էին իրար տուն. կանայք եփում, թխում, հիլրասիրում, անդադար զորուցում, իսկ տղամարդուկ խմում, ծխում, նարդի էին խաղում: Կեանքի հոսքը շենքի մէջ շարունակում էր ընթանալ իր միալար բզզոցով ու բնականոն հունով: Մի քանի հարսանիքներ եղան: Աղջկներից շատերը զնացին ուրիշ շենքեր, տղաները հարս բերեցին, ու յետոյ նրանք նոյնպէս առանձնացան: Երիտասարդների թիւը զնալով պակասում էր: Շենքը ծերանում էր, շենքի հետ ծերանում էին բնակիչները: Մահեր էլ եղան...

Մի օր էլ պատահեց այնպէս, որ երկրից գնալու մարմաշի մանրէ ընկաւ շենքի մէջ: Յայտնի չեղաւ, թէ ով էր առաջին վիրուսակիրը, բայց վիրուսը շատ արագ տարածւց: Բարեբախտաբար, առաջին էտապում, ոչ բոլորը վարակվեցին. բնակարաններից ներս եւ մասնակի կամ ընդհանուր հանդիպումների ընթացքում թեր եւ դէն կարծիքները բախտում էին իրար, յարուցում լարւածութիւն, տեղի տալիս անվախճան վէճերի, գորգորոցների: Չկար նախկին համեմատական անդորրը: Նիմա խօ-

## ՀԵՔԻԱՌ ԳՆԱԼ-ԶԳՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոլիա Տէր Յովհաննիսեան



սակցութեան միակ թեման գնալու էր: Ոմանք թարկում էին նոր երկրի բարեմասնութիւններն ու առաւելութիւնները, միւսները՝ թերութիւններն ու վտանգները, անիմաստ համեմատութիւններ ու զուգահեռներ անցկացնում երկրների միջեւ: Դա շարունակւեց այնքան ժամանակ, մինչեւ առաջին բնակարանը սուսուփուս դատարկւեց մնացածներին դմելով կատարած փաստի առջեւ: Վերջին օրերին իմացան, հաւաքւեցին, արցունքուտ աչքերով մէկ-մէկ գրկախառնւեցին, բարի երթ մաղթեցին: Յուզեցին, տխրեցին, սկսեցին աւելի լրջօրէն մտածել գնալ-չգնալու մասին: Սկսեցին կասկածել ու չհաւատալ միմեանց: Ծայր առան նաեւ կանխագուշակումներ, բացայայտուններ.

-Չեն դիմանայ, ետ կգան,-ասաց գնացածների կից հարեւանը:

-Կարծո՞ւմ ես..., դու քո գլխի ճարը տես,- պատախաննեց հինգերորդ յարկի արեւելեան կողմի բնակարանի տէրը :

-Աղջիկը սիրահարւած էր իմ տղային,-խոստովանեց երկրորդ յարկի մէջտեղի բնակարանուն ապրող այրի կինը , - իմա տղաս ջանս ուտում է, ասում է, բա մենք ե՞րբ ենք գնալու: Զգիտեմ, ի՞նչ քար գցեմ գլխիս:

-Դու էլ գնա, ինչի՞ ես սպասում,- խորհուրդ տւեց չորրորդ՝ արեւմտեանի բնակիչը, թեւ ինքն այնքան էլ չէր տառապում գնալու մարմածով:

-Չէ, գնաս, կը փոշմանես,-մէջ ընկաւ մէկ ուրիշը, ով արդէն ուղարկել էր գնալու համար անհրաժեշտ թղթերը եւ սպասում էր պատախանի...

-Նեշտ է ասել՝ գնալ, բա ի՞նչ անեմ գործս, ունեցւածքս...

Շենքում կորել էր հանգիստը, նախկին օրերի ջերմութիւնը, փոխստերմութիւնը:

Ամէն դէպքում, առաջին օրինակը սաստիկ գայթակղիչ էր. գործը, աստիճանաբար, տեսականից անցնում էր գործնական փուլ: Մնալը թւում էր յետամնացութիւն, իսկ գնալու հրամայա-

## ՎԵՐԶԱՊԷՍ ԵԿԽՈՍՈՒԹԻՒՆ

կանը դառնում կենսական անհրաժեշտութիւն: Առաջինին յաջորդեց երկրորդ ընտանիքը, երրորդը եւ այսպէս շարունակ: Ասես բոլորը փշերի վրայ էին նստած:

Բնակարանները դատարկվում էին, կահ-կարասին գնում էր ջրի արժեքով: Բնակարանների մի մասը մնում էին թափուր, միւսները վաճառում: Գալիս էին ազգութեամբ ու կրօնով տարբեր նոր բնակիչներ, որոնք սկզբուն փոքրանասնութիւն էին, յետոյ հետզետ շենքում դարձան մեծամասնութիւն:

Ու եղաւ այնպէս, որ միայն մի ընտանիք մնաց նախկին բնակիչներից, այն է՝ ծւատած, բաժանքաժամ եղած. դուստրը մի երկրում, ուստո՞ր՝ այլ, իրենք՝ մարդ ու կիմ մենակ, որբացած, բայց անդրդելի՝ իրենց մնալու որոշման մէջ:

Սի օր, որտեղից-որտեղ, մանրէն պտուեց, պտուեց, եկաւ մտաւ կոնց փորը: Երեւի կարօտել էր զաւակներին:

-Ի՞նչ ես ասում, այ մարդ, - ասաց նա, - մենք էլ չգնա՞նք:

-Գնանք, ի՞նչ անենք, - տատանսոտ պատասխանեց ամուսինը:

**Անցաւ մի քանի օր:**

-Ասում ես գնանք, հա՞-, հարցրեց ամուսինը:

-Գնանք, մնանք ի՞նչ անենք, - հաստատակամ պատասխանեց կինը:

Անցաւ մի քանի ամիս: Նրանք սկսեցին վաճառել իրենց ունեցած-չունեցածը...

.....  
.....

Շենքը դատարկւեց հնարնակներից, բայց երեք խմնոր չընկաւ երկնքից, քանի որ այս հեքիաթը դեռ շարունակում է...



**Տէր-Պետրոսեան՝ իշխանութիւնն իրականացրել է պայմանները, եւ այժմ Կոնգրեսը սկսում է պատիրակութիւն ձեւալորել**

Մայիսի 31-ին ընդդիմութեան հանրահաւաքում համաներման արդիւնքում ազատ արձակած բանտարկեալների՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի եւ նախկին պատգամաւոր ու Ղարաբաղեան պատերազմի հերոս Սասուն Միքայէլեանի ներկայութիւնը ոգեշնչել է ժողովրդին եւ հանրահաւաքին նոր թափ հաղորդել:

Սակայն, առանցքային խօսքն ասել է ոչ թէ Փաշինեանը, որից ակնկալում էին ընդդիմադիր շարժման արմատականացում, այլ Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ, անկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Յիշեցնենք, որ քաղաքանտարկեալներին ազատ արձակելու, 2008 թ. Մարտի 1-ի նոր հետաքննութիւն սկսելու եւ Ազգառութեան հրապարակում հանրահաւաքներ անցկացնելու արգելքը հանելու պահանջներն առաջ էր բաշել ՀԱԿ-ը՝ որպէս նախագահ

Սերժ Սարգսեանի եւ նրա կառավարութեան հետ պաշտօնական երկխօսութեան նախապայման: Անփոփելով պայքարի գարնանային շրջանի արդիւնքները՝ Լեւոն Տէր-Պետրոսեանն ասել է, որ իշխանութիւնն իրականացրել է պայմանները, եւ այժմ Կոնգրեսը սկսում է պատիրակութիւն ձեւալորել, որը կը մասնակցի բանակցութիւններին: Նոյնը նա ակնկալում է նաեւ իշխանութիւններից: Ընդդիմութեան առաջարկած երկխօսութեան օրակարգում կը լինեն արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը, սակայն Տէր-Պետրոսեանն ասել է, որ իշխանութիւնը կարող է ունենալ իր օրակարգը, եւ ընդդիմութիւնը չի կարող այն անտեսել: Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ընդարձակ ելոյթում պատասխանել է այն մեղադրանքին, թէ Կոնգրեսը գաղտնի գործարքի մէջ է մտել իշխանութեան հետ, որին ոչ լեզուին է համարում: Նա նշել է, որ որոշ ուժեր խուճապի մէջ են առաջիկայ երկխօսութիւնից, որը կարող է երկրում սոցիալ-տնտեսական եւ քա-



ղաքական իրավիճակի արմատական փոփոխութիւնների յանգեցնել: Եւ աւելի շատ նեարդայնանում է երկրի «ամենանեարդային» մարդը, ասել է Տէր-Պետրոսեանը՝ ի նկատի ունենալով ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին: Ընդ որում թէ նա եւ թէ միւս ելոյթ ունեցողները, այդ թուում նաեւ՝ Փաշինեանը, յայտարարել են, որ ճգնաժամից դուրս գալու միակ ելքը, որը 2008 թ. ընտրութիւնները կեղծելու եւ ոչ լեզիտիմ իշխանութիւն ծեւաւորելու հետեւանք է, արտահերթ ընտրութիւններն են: Ըստ էութեան, կարելի է արձանագրել, որ քաղբանտարկեալների ազատ արձակումից յետոյ երկրուն իրավիճակը վերադարձել է յետընտրական գրոյական կտու՝ ընդդիմութիւնն ընտրութիւնները կեղծած է համարում, իսկ իշխանութիւնը խօսում է Տէր-Պետրոսեանի կողմից իշխանութիւնը տապալելու փորձի նասին: Տէր-Պետրոսեանն ընդգծել է, որ քայլ Հայ ազգային կոնգրեսի հետեւողական պայքարից, եղել են նաեւ մի քանի գործոններ, որոնք ստիպել են իշխանութիւններին զիջումների գնալ: Դրանք եւ արաբական աշխարհում տեղի ունեցած իրադարձութիւններն են, որոնք վերջակէտ են դրել բռնատիրական ուժիմների նկատմամբ միջազգային հանրութեան հանդուրժողականութեանը:

Եւ ղարաբաղեան խնդիրը, որը Տէր-Պետրոսեանի կարծիքով՝ «մօտենում է հանգուցալուծնան», իսկ միւս կողմից, գործընթացի տապալման դեպքում, զգալի է դաշնում Արքբեջանի կողմից պատերազմի վերսկսման սպառնալիքը»: Իշխանութիւնը հասկանում է, որ հանրութեան կողմից ներկայիս վստահութեան քիչ դեպքում նա ունակ չէ հակամարտութեանը քաղաքական լուծում տալու եւ չի կարող յոյս դնել պատերազմում յաղթանակ տանելու վրայ: Ընդ որում նա նշել է, որ Հայաստանում ցանկացած ներքաղաքական զարգացումների դեպքում ղարաբաղեան հարցով քաղաքական ուժերի դիրքերը միաձոյլ կը լինեն: Երրորդ գործօնը յաճախակի դարձած սոցիալական ընդգումներն են, սակայն գլխաւոր գործօնը շարունակում է մնալ ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը: Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարել է, որ «չպէտք է պատրանքներ փայփայել իշխանութեան կողմից բարեկոյտմների իրականացման մտադրութեան վերաբերեալ: Զիջումները կատարւել են բացառապէս սառը հաշւարկի եւ երկրի սոցիալ-տնտեսական աղետալի վիճակի անելանելիութեան զիտակութեան հիման վրայ»: Տէր-Պետրոսեանը նշել է, որ ի տարբերութիւն արաբական երկրների, ընդդիմու-

թիւնը փորձում է իշխանափոխութեան հասմել առանց ցնցումների, սահմանադրական ճանապարհով, թէեւ շտապել է ասել, որ արաբական սցենարը չպէտք է բացառել՝ «ելնելով իշխանութեան վարքագծից»:

Նախա Հայրումնեան  
Աղբիւր՝ [www.armenianow.com](http://www.armenianow.com)

Դաշնակցութիւնը ողջունում է իշխանութեան եւ ընդդիմադիր ՀԱԿ-ի երկխօսութիւնը

Դաշնակցութիւնը չի խանդում իշխանութեան եւ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի երկխօսութեանը: Աւելին՝ ողջունում է նրանց քայլը: Խորհրդարանում այսօր հրաիրած ասուլիսի ժամանակ այս մասին յայտարարեց Դաշնակցութիւն խմբակցութեան ղեկավար Վահան Յովհաննի-



սեանը:

Այդ գործընթացի ամենադրական արդիւնքը Յովհաննիսեանը համարում է այն, որ Հայաստանում վերջապէս զարգարական պայքար կը ծաւալի:

«Ի՞նչ է ասում Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ Հայաստանը չի կարող դիմանալ, եւ կարող է լաւ ապել մենակ ու մենակ Ղարաբաղը յանձնելու պարագայում: Միւս կողմից, Դաշնակցութիւնը ասում է՝ ոչ, կարելի է դիմանալ ու զարգանալ զգիշելով, որովհետեւ մենք

այդ պոտենցիալը ունենք», - պարզաբանեց Դաշնակցութիւն խմբակցութեան ղեկավարը: Նոյն հարցի վերաբերեալ իշխանութեան դիրքորոշումը Վահան Յովհաննիստեանը գնահատեց «ունիկալ» ու ընդգծեց. - «Դժմա տեսէք, թէ ի՞նչ է ասում իշխանութիւնը՝ կարելի է դիմանալ, շատ ցանկալի է դիմանալ, բայց ես չեմ կարող»: Դայ ազգային կոնգրես - իշխանութիւն երկխօսութեան պտուղները արդէն երեւում են, կարծում է Յովհաննիստեանը: - «Եւ իշխանութեան, եւ ընդիմադիր ՀԱԿ-ի կողմից կայ յարձակում ՀՅԴ-ի վրայ»:


Այս, իր գնահատմանը՝ «համատեղ» յարձակումը Դաշնակցութեան խմբակցութեան ղեկավարը բացատրում է նրանով, որ ՀԱԿ-ը նոր թիրախ է փնտրում, իշխանութիւնը նրա համար այլեւս թիրախ չէ: Ընդ որում, Դաշնակցական գործիքը շատ ողջունելի է համարում իր կուսակցութեան դէմ այս «յարձակումը»:

**Աստղիկ Բեդեւեան  
Աղբիւր՝ «Ազատութիւն» ռադիոկայան [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)**

### **«Ժառանգութիւն»-ը չի քննադատում իշխանութիւն - ՀԱԿ երկխօսութիւնը**

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիստեանը շաբաթ օրը յայտարարեց, թէ իրենք չեն քննադատում Դայ ազգային կոնգրեսի եւ իշխանութիւնների միջեւ հնարաւոր երկխօսութիւնը, աւելին՝ ողջունում են այն՝ եթէ երկխօսութիւնը բերի արտահերթ ընտրութիւնների:

«Եթէ յայտնի երկխօսութիւնը բերի արտահերթ ընտրութիւնների, այս ահաւոր, կործանարար իրավիճակի արտահերթ լուծման, մենք միայն կողջունենք այդ արտահերթ լուծումը», - ասաց իր համախնների հետ Ազատութեան իրապա-



րակ համդիպման եկած Ռաֆֆի Յովհաննիստեանը՝ շարունակելով.

- «Բայց եթէ դրանից բացի կայ մի այլ օրակարգ, որը գնում է պայմանաւորածութիւնների, որտեղ կը դիտարկւեն այլ հարցեր, հերթական լուծումներ, Արցախի հիմնահարցում անընդունելի գիշումներ, Թուրքիա - Դայաստան յարաբերութիւններում անընդունելի քաղաքականութեան շարունակութիւն, այստեղ, իմ կարծիքով, ժողովուրդը արդէն կասի՝ ոչ մեղսակից համագործակցութեանը»: Նա յոյս յայտնեց, որ «ուշացած այդ երկխօսութիւնը» չի ունենայ այնպիսի հետեւանք, որ «Մարտի 1-ը նոյնպէս կոծկի», «ոչ թէ օրէնքը կիրառի, ոչ թէ ծշմարտութիւնը բացայատուի, այլ քաղաքական պայմանաւորածութիւնները բերեն նրան, որ այդ անյարնար էջ փակի»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Ժառանգութեան» առաջնորդը յաելեց, որ սպառած չի համարում կոնգրեսի հետ համագործակցութեան հնարաւորութիւնները:

**Աստղիկ Բեդեւեան  
Աղբիւր՝ Ազատութիւն ռադիոկայան [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)**

### **Երկխօսութեան ձախողում**

«Դայկական ժամանակ» ընդիմադիր օրաբերին տιւած մեկնաբանութեան մէջ, որը իրապարակ-

ւել է ուրբաթ, Յունիսի 10-ին, Դայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) առաջնորդ Տէր-Պետրոսեանն ասել է. «Որոշումների կայացման գործում զրոյական դերակատարութիւն ունեցող անձանց կարծիքը տւեալ պարագայում որեւէ նշանակութիւն չունի: Դետեւաբար, քանի դեռ իր տեսակետը չի արտայատել [նախագահ] Սերժ Սարգսեանը, անիմաստ է այդ մասին որեւէ բան ասել: Միայն պէտք է ի նկատի ունենալ, որ երկխօսութիւնը ոչ այնքան ՀԱԿ-ին, որքան իշխանութեանն է անհրաժեշտ: Երկխօսութեան չկայացման դէպքում Կոնգրեսը ոչինչ չի կորցնի, այլ գուցեւ քաղաքական տեսակետից կը շահի: Կորցնողը լինելու է առաջն հերթին հենց իշխանութիւնը»:

Կեր-Պետրոսեանի այս յայտարարութիւնը հնչեց քաղաքական դաշտում ծաւալւած քննադատութեան ֆոնին, որի հիմնական շեշտադրութիւնը երկխօսութեան ձախողումն ու դրա ժամանակավրեպ լինելն է: Շատերը խօսում էին նման երկխօսութեան ձախողման մասին, նույնիսկ նախքան այն լրջորեն կը սկսէր:

Չնայած այս շաբաթասկզբին իշխանութիւնների յստակ պատասխանի, որ չեն պատրաստում երկխօսութեան պատիրակութիւն ձեւաւորել, որի օրակարգը լինելու էր արտահերթ ընտրութիւնների անցկացումը, ու չնայած ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետեանի յայտարարութեանը, որը տարածել էր հենց նախագահ Սերժ Սարգսեանի մամլոյ ծառայութեան կողմից, ՀԱԿ-ի ղեկավարները դեռ պնդում են, որ պատասխանը սպասում են անձամբ նախագահ Սարգսեանից: Սակայն շատերի կարծիքով՝ սա զուտ «աչքապողի է»:

# ԸՆԹԵՐԺՈՒՄ ԷՔ «ՅՈՅԱ»

«Յոյս»-ի 100 համարների հրատարակութիւնը կանոնաւոր յաճախականութեամբ ինքնին ծեռքբերում է: Թերթիս որակը, ինչ խօսք, համարից համար, տարբերել է, ումեցել է ելեւէջմեր. դա թող դատեն մեր ընթերցողները: «Ինչպէ՞ս էք գնահատում «Յոյս»-ի առաջին հարիւր համարները». այս հարցին պատասխանել են՝ հայոց դպրոցների ուսուցիչ ու բանաստեղծ Նարվանը եւ երիտասարդ գրող ու մեր աշխատակից Շանթ Բաղրամեանը:

«Յոյս»-ը համայնքի առաջին թերթն է, որ հաւատարիմ է ժամանակակից մամուլի սկզբունքների համաձայն», այն է՝ թափանցիկութիւն, առարկայական սառը մօտեցում, անկողմնակալ հայեացք, որն իհարկէ չի նշանակում թերթը լցնել ոչինչ չասող, «չեզոք» գրութիւններով, այլ ընդհակառակը, նշանակում է խրախուսել մարդկանց արտայայտել ամէն կարգի եւ ուղղութեամբ տեսակէտներ եւ թող դրանք բախւեն միմեանց: Յաւակնում ենք, որ տպագրել ենք ստացած բոլոր գրութիւնները (պարզ է երկիր օրէնքների սահմաններում, եւ եթէ դրանք ուղղակի հայիոյանքներ չեն, կամ էլ չափազանց ծաւալուն):

«Յոյս»-ի 100-րդ համարի հրատարակման առիթով նաեւ զրուցել ենք թերթիս արտօնատէր՝ Լեւոն Ահարոնեանի հետ:

Ո.Ս.

## ՀԱՐԺԱՎՐՈՅՑ «ՅՈՅԱ»-Ի ԱՐՏՈՆԱՏԷՐ ԼԵՒՈՆ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՀԵՏ «ՅՈՅԱ»-Ը ԱՆՁԱՆԿԱԼԻ ԱՆՁԱՆԵ ՃԱՆԿ ՉՈՒՆԻ

-ինչպէ՞ս էք գնահատում  
**«Յոյս»-ի 100 համարները:**

-Դպարտանում են, որ մեր «Յոյս»-ը կարողացել է իր 100 համարներով թէ՛ Իրանում եւ թէ՛ Հայաստանում իր տեղը բացել հասարակութեան մէջ: Անձամբ ականտես են, թէ ինչպէս, երբ մի քիչ «Յոյս»-ը ուշանում է, զանգահարում են ինձ եւ հարցնում են թէ «բա ի՞նչ էղաւ»: Ուրեմն մարդիկ հետաքրքրւած են: Սա ինքնին մեզ համար խթան է հանդիսա-

նում, որ շարունակենք մեր գործը եւ փորձենք բարելաւել մեր թերթը:

Իսկ թերթի պարսկերէն բաժինը աւելի հեշտ է կապ հաստատում թէ մեր երիտասարդութեան հետ եւ թէ պարսիկ հասարակութեան հետ: Պարսիկ լընկերներս շատ են հաւանում Հայաստանի, հայոց պատմութեան, Եղեռնի եւ այլնի մասին պարսկերէն յօդածները:


Մեր համայնքում նման թեր-

թեր, հրատարակութիւններ եւ այլն, դժբախտաբար գալիս են, փայլում են, յետոյ արագ խամրում ու հանգչում են: Բայց ես եւ «Յոյս»-ի աշխատակազմը, միշտ իհմա պահել ենք թերթի որակը եւ կաշխատենք տարիներ շարունակ նոյն ուժգնութեամբ շարունակել:

-Եղե՞լ են պահեր, որ մտածեք դադարեցնել թերթի հրատարակութիւնը:

-Ո՞չ: Որովհետեւ ես «Լոյս»-ի

# 100 ՀԱՄԱՐԸ



Ժամանականից ծանօթ էի թերթ հրատարակելու գործի հետ, եւ իմանում էի, որ կանոնադր թերթ հրատարակելը մեծ ծախսերի է նայում: Անգլերէն բառը գործ

ածեմ, սա իմ հորին է: Յորի այսինքն՝ քո իսկական աշխատանքի կողքին մի ուրիշ բանի նկատմամբ էլ սեր ունենաս եւ դրանով զբաղես: Սա էլ իմ հորին է: Սիրում եմ գրքով, թերթով եւ հրատարակչութեան վերաբերող գործերով զբաղւել: Լուրջ մտածել եմ մի կերա ծախսերը իշեցնելու մասին, բայց թերթը դադարեցնելու մասին՝ չեմ մտածել:

-Թերթի հրատարակութեան առաջին տարւայ ընթացքում, դուք աւելի ակտիւ մասնակցութիւն ունեիք դրա բովանդակութեան մէջ: Յատկապէս մեծ հե-

տաքրքութիւն ստեղծեց ձեր նամակը Արամ Վեհափառին եւ դրա արձագանքը: Ինչո՞ւ այդ մակարդակի հարցեր այլեւս չէք արժարում:

-Թողեք ձեզ վստահացնեմ, որ թ «Լոյ» եւ թ «Յոյ» պարբերականներում հրատարակուած յօւածները, այդ թուր հենց Վեհափառին ուղղւած իմ նամակը, իրենց ազդեցութիւնն են ունեցել մեր համայնքի կեանքում: Այս օրերին փոփոխութիւններ ենք նկատում պատգամաւորական ժողովում, թեմական խորհրդում եւ այլն, որոնցում այս թերթերը իրենց դերն են ունեցել: Օրինակ

# « Յ Ա Յ Ս » - Ի Ս Ծ Խ Ա Տ Ա Կ Ա Ձ Մ



Ոորերթ Սաֆարեան՝  
խմբագիր



Լիա Խաչիկեան՝  
գեղարվանսական ծեւալորման  
պատասխանատու



Թարմէն Ազարեան՝  
հայերէն բաժնի սրբագրիչ



Զաքրին Եաղութի՝  
Զարտողարութի ու  
բաժանորդագրութեան  
պատասխանատու



Նասիմ Նաջաֆի՝  
պարսկերէն բաժնի սրբագրիչ



Արման Ստեփանեան՝  
Մարզական բաժնի  
պատասխանատու



Զաշիկ Սաֆարեան՝ կայքի  
պատասխանատու



Իշխան Իբրամոսեան



Ալիօնզա Սանագու

տեղեակ եմ, որ հենց հիմա խօսուում է այստեղ դպրեվամբ հիմնադրելու եւ հենց տեղի երիտասարդներից քահանայ Վարդապետ դաստիարակելու մասին։ Այդ նամակը աղմուկ շատ հանեց, բայց նպատակը աղմուկ հանելը չէր, այլ համայնքի նկատմամբ մտահոգութիւններ արտայայտելը։

Բայց, այո՛, ճիշտ էք, աւելի քիչ ակտիւութեանս վերաբերեալ։ Դրա պատճառն այն է, որ նախ տարիքս է բարձրացել է, եւ գուցէ աւելի կարեւորն այն է, որ խիստ զբաղւած են եղել։ Յուսով են շուտով «Յոյս»-ին աւելի կաշխատակցեն։

-Մենք յաւակնել ենք եւ յաւակնում ենք, որ մեր թերթը կուսակցական չէ, յատուկ գաղափարախօսութեան չի պատկանում, այլ իր մէջ արտացոլում է համայնքի բոլոր հոսանքների տեսակլուները։ Անցեալ տարιայ մեր խմբագրական կազմի փոփոխութիւններից յետոյ, Անդրանիկ Սիմոնեանի եւ Անդրանիկ Խեցումեանի խմբագրական կազմից հեռանալուց յետոյ, այս հարցն է ծագել որոշ մարդկանց մտքում, թէ արդեօք մենք ամենայնդեպս հաւատարի՞ն ենք վերոյիշեալ սկզբունքին եւ պատրա՞ստ ենք իրատարակել ցանկացած հեղինակի նիւթը՝ անկախ նրա գաղափարական պատկանելութիւնից։

-Հարիւր տոկոսով այդպէս է։ Տեսէք, «Ալիք»-ը կուսակցական թերթ է, եթէ կուսակցութիւնը ցանկանում է մի բան գրի, անկախ խմբագրի կարծիքից, դա պիտի տպիի։ Ոչ մի կասկած, որ այդպէս է։ Մերը չէ. մեր թերթի նպատակներից մէկն այն է, որ մարդիկ խօսեն եւ արտայայտեն։ Եթէ «Յոյս»-ն էլ դաշնայ ողջ գովաբանութիւն ներկայ պայմանների, դա էլ ի՞նչ օգուտ կումենայ։ Մենք քննադատութիւններ ունենք։ Համայնքում եթէ մենք չքննադա-

տենք ճիշտ չեն։

-Թոյլ տւեք աւելի պարզ ասել. մեզ հարցնում են, որ անցեալ տարιայ խմբագրական կազմի փոփոխութիւններից յետոյ, արդեօք ձեր մոտեցումն էլ փոխւե՞լ է, արդեօք դուք էլ հիմա անցանկալի մարդկանց ցա՞նկ ունեք, որոնց գրութիւնները չեք տպագրում։

-Չէ, նման բան չկայ։ Դիմա էլ մեզ որեւէ յօդած տան կը իրատարակենք, դրան պատասխան եղաւ, այն էլ կը իրատարակենք։ Դիմա պարոն Սիմոնեանն էլ յօդած տայ, կը տպենք։ Իմ նպատակը «Լոյս»-ը եւ «Յոյս»-ը իրատարակելուց այն է եղել, որ այն պատերը որ մեր համայնքում մեր մէջ եղել է, քանդենք։ Բարեկամն, դու մի օր ծախ ես եղել, լաւ, Ուսուսատանն էլ ծախ է եղել։ Դիմա չե։ Դիմա դարձել է համար մէկ կապիտալիստ։ Ես չեմ ասում կապիտալիստն ամենալաւ բանն է, բայց կոմունիստական Ուսուսատանը քանդել է, չէ։ Ես չպիտի քեզ մեղադրեն որովհետեւ դու ծախ ես եղել։ Մենք մի փոքրիկ համայնք ունենք, եկեք այս համայնքը միասին կառավարենք։ Ոչ մի կողմն է հասկացել այս, ոչ էլ միւսը։ Տեսէք, Կարեն Դեմիրճեանն էլ ծախ էր, բայց ազնութեան մարմնացում էր, ես նրա հետ շատ մօտ եմ եղել, շատ ազգանկէր նարդ էր։ Իմ նպատակը այդ պատը մէջտեղից վերցնելն էր, բայց տեսնում եմ չի լինում։

-Վերջում բան կա՞յ աւելացնելու։

Խնդրանքս մեր ընթերցողներից այն է, որ եթէ գանգատ ունեն մեր նկատմամբ, գանգատւեն մեզ, իսկ եթէ սիրում են թերթը, թող այն տարածեն։ Մեր երիտասարդներին ծանօթացնեն թերթի եւ ընթերցանութեան հետ։ «Յոյս»-ը իրատարակելուց իմ նպատակը մշակութային աշխատանքն է, փող աշխատելը չե։



# 100 Կ 100

\*\*\*


## Նորվան

Վաղուց ի վեր, մեր համայնքում զգացուում էր տարբեր, տարաբնոյթ ու միեւնոյն ժամանակ հանրամարչելի թերթի բացակայութիւնը: «Յոյս»-ը՝ իր գունագեղ արտաքինով ու օրուայ չափանիշների համապատասխանող ձեւատրում, եկաւ լրացնելու այդ բացը: Գուցէ «Յոյս»-ը նրանց ճաշակովը չէ, ովքեր արենտավարժ ու ներ մասնագիտութիւններ ընդգրկող թերթերի ընթերցող են, բայց դրանով հանդերձ, իրաքանչիւրը գտնում է իրեն՝ ծարաւը յագեցնելու համար: Ժուրնալիստական խաղի կանոններին լաւածանօթ խմբագիրը ճանաչելով իր ընթերցողին ու իրազեկ լինելով ներհամայնքային խնդիրներին, յատկապես այն ժամանակ է դրսեւուրում իր մասնագիտական հնտութիւնը, երբ վիճարկելի եւ համայնքին յուզող խնդիրներ շօշափելով, մարտահրաւը է նետում տպագրելով նոյն խնդրի շուրջ առկայ թեր ու դեմ կարծիքներում, դրանով իսկ հաստատելով բազմածայնութեան մոլիք ուժը, որպէս իրաքանչիւր հասարակութեան զարգացման գրաւականը:

«Յոյս»-ը ընտրել է երկխօսութեան երկկողմանի ժամապարհ, եւ պահպանելով ժուրնալիստական «ամկողմանակալութիւնը» երեւան է հանում տարբեր ու երեմն իրարամերժ տեսակէտներ, որից, քնականաբար, շահում է ընթերցողն ու հա-

մայնքը:

Որոշ համարներում հանդիպում ենք մեծ թուզ պատրաստի, դևսից-դեմից քաղլած նիւթերի, որի պատճառով էլ, անկախ դրանց բովանդակութիւնից, համարը կորցնում է ինքնատիպութիւնը, եւ ընդհանրապէս, քիչ ենք հանդիպում ինդինակային, ինքնուրոյն նիւթերի, գուցէ այն պատճառով, որ մեզ մօտ նազել է հայերէն իմա-



ցող՝ գրիչ շարժողների թիւը:

Երկշաբաթերթի մարդական լուրերը ժամանակավետ են ու չեն համապատասխանում ընթացիկ իրադարձութիւններին, ու եթէ խմբագրութիւնը պնդում է պահպանել այդ բաժինը, հարկաւոր է վերանայել ու նոր մօտեցում ցուցաբերել:

Նաեւ ցանկալի է չհանդիպել աղբիւրը չնշանած, անստորագիր յօդածների:

«Յոյս»-ի 100-րդ համարը ընթերցողի սեղանին է:

Թող օրըստորէ բարելաւման եւ ոչ միայն Ֆիզիկակապէս լինելու յոյսով՝ 100-ը բազմապատկի 100-ով: Ամէն:

\*\*\*

## Շամբ Բաղրամեան

«Յոյս» հասարակական-մշակութային երկշաբաթերթի 100-րդ համարն էք ընթերցում: Սա ինքնըստինքեան կարեւոր երեւոյթ է: Այսօրւայ իրանահայ համայնքում, այս իրադարձութիւնը յաջողութիւն է: Անկասկած հարկ ու պատշաճ է շնորհակալութեան խօսք ուղղել «Յոյս» երկշաբաթեր-



թի լուսամիտ խմբագրին ու ամբողջ անձնակազմին: Վարձքներդ ի կատար:

«Յոյս» երկշաբաթերթը արդէն իսկ լոյս է տեսնում առաւել քան 4 տարի եւ ըստ հենց իր պաշտօնական կայքի բացատրութեան այն «...ընդհանուր, հանրամատչելի, ոչ-զաղափարախօսական, ոչ-կուսակցական անկախ երկշաբաթերթ է, որն աշխատում է իր էջերում արտացոլել իրանահայ համայնքի կարեւոր իրադարձութիւնները եւ հասարակութեանը վարժեցնել քննադատութեան եւ հանդուրժողականութեան»:

Կարելի է այսօր քննել ու հարցնել թէ ինչ-

քանո՞վ է «Յոյս» երկշաբաթերթին յաջողւել իր իսկ ճշտած առաքելութիւնը իրականացնել: Ինչքանո՞վ է այն հանրամատչելի եղել, անկողմնակալ, կամ որքանո՞վ է յաջողել «Յոյս»-ին, արտացոլել իրանահայ կեանքը իր հարցերով ու դժւարութիւններով եւ այսպէս...

Այս երկտողը վերի հարցերը պատասխանելու մտադրութիւն չունի: Այդ հարցերի պատասխանը գտնելու համար կարելի է պատրաստել վիճակագրական հարցարաններ, կարելի է դիմել մասնագիտական քնարկումների ու լսել հասարակութեան տարբեր խաւերի տեսակետներն ու դիտանկիւնները:

Այնուամենայնիւ վերջիշեալ հարցերը պատասխանելու փոխարէն, ստորեւ կանդրադանամ այն դրւագներին, որը ընդհանրապէս մասնվին դասում է մի աշխոյժ ու ակտիւ հասարակութեան մասնիկը, ի մասնաւորի իրանահայ համայնքի իրայատկութիւնները նկատի ունենալով: Յետեւաբար «Յոյս»-ի կամ ցանկացած առողջ մամուլի ներկայութիւնն ու իրատարակումը պիտի նկատուի անհրաժեշտութիւն:

1)Մամուլի բազմատեսակ պարտականութիւններից մեկն այն է, որ իրեն պատկանող համայնքի ու հասարակութեան տեղեկութիւնները

արտացոլի ճշգրիտ, գրաւոր կերպով: Գրաւոր մշակոյթը, սեւ սպիտակի վրայ գրաւած տեղեկութիւնները հիմնական դեր ու ազդեցութիւն ունեն տեղեկութիւնների ճիշտ ու անկողմնակալ շրջանառութեան մէջ: Այսօր մեր համայնքում աւելի շատ խօսում ենք քան թէ գրում: Այսօր աւելի շատ լսում ենք քան թէ կարդում: Դա ինքնըստինքեան տեղեկութիւնների սխալ ու անմակարդակ փոխանցման պատճառ է դառնում: Անկախ ամէն ինչից, այսօր գրելու ու կարդալու մշակոյթը պակասում է մեզ մօս ու պարզապէս ցանկացած նոր գրաւոր տեղեկագիր՝ մամուլ, կայքէջ եւ այլն ... պիտի օգնի մեզ՝ գրաւոր մշակոյթի զարգացման գործընթացում:

2)Մամուլը, ժողովրդավարութեան հասնելու միջոցներից մէկն է: Բազմաձայն հասարակութիւնը, որ իր տեսակետներն ու հարցերը կարողանում է բազմապիսի խողովակներից ու դիտանկիւններից արտայայտել, աւելի ժողովրդավար է: Կասկածելի չէ, որ բոլորը քաջ գիտակցում ու ցանկանում են այդպիսի մի հասարակութիւն: Այնուամենանի ժողովրդավար հասարակութիւն ունենալու ցանկութիւնը բարական չէ, այլ նաեւ պիտի յարգել ժողովրդավար հասարակութիւն ստեղծելու եւ պահպանելու նախապայ-

մաններն ու ճանաչւած ծեւերը: Իսկ ազատ, թափանցիկ ու անկողմնակալ մամուլը այդ նախապայմաններից մէկն է:

3) Մեր համայնքի համար, կարեւորութիւն պիտի ունենայ, այն հանգամանքը, որ մենք որպէս հայերէնով նտանող ժողովուրդ, կարող լինենք աշխարհը դիտել ու ընկալել հայերէն լեզուվ: Ժամանակակից մատուցման ծեւերով օժտած մամուլը, անհերքելի դեր է կարող ունենալ այս գործօնում: Յայը պիտի ունակ լինի՝ կարդալ, հասկանալ ու վերլուծել աշխարհը հայերէնով ու այս աշխարհը միայն չի սահմանափակում մեր ներ շրջանակներով: Յամայնքը իմանալով իր աշխարհագրական իրավիճակն ու հարցերը նաեւ պիտի ընթանի թէ աշխարհը ո՞ւ է գնում:

4) Յ ա մ ա յ ն ք ո ւ մ տպագրող մամուլը լոկ պասի դիրքերում չպիտի գտնի: Նորա միակ դերն այն չէ, որ արտացոլի համայնքի ու հասարակութիւններու համար է առաջադէմ հասարակութեան հարցը ու խնդիրը: Այլ այն նաեւ կարող է ակտիւ դեր ունենալ համայնքում՝ այն կարող է նոր մտքեր ծեւաւորի, նոր հարցեր արծարծի ու լուծումներ գտնի: Մամուլը նաեւ կարող է պատրաստի այն միջավայրը, ուր համայնքի արեւստագէտը, մտաւորականը, բանաստեղծը եւ ... արտացոլի իր մտքերն ու ստեղծագործութիւնը: Սի խօսքով բազմապիսի, բազ-

մառ մամուլը ու հրատարակչութիւնը նաեւ կարող է աջակից դառնալ համայնքի մտային վերելքում:

5)Մամուլը կարող է ազնիւ ու հահոյանքներից ծերբազատաւած, քննադատութեան մթնոլորտ ստեղծի համայնքում: Այն հասարակութիւնը, որ իրեն քննադատելու ու շտկելու ծեւեր չի գտնում, անկասկած գտնում է փակուղում: Յասարակութիւններում միշտ էլ եղել է հասարակական մի խաւ, որ խուսափել է այս անհրաժեշտութիւնից ու քննադատութիւններն ու սխալների մատնանշումը համարել է սրբադիտութիւն: Դա միշտ պատահում է: Կարեւորն այն է, որ հասարակութիւնը հասնի այն հասունութեան, որը ընկալի թէ քննադատութիւնը հարկաւոր է առաջադէմ հասարակութիւն եւ յիշել է համար:

...Եւ այսքանը: Կարելի է մէկ անգամ եւս յիշել «Յոյս»-ի ընտանիքը ջանքերը 100 համար «Յոյս» տպելու համար:

Իսկ վերջում՝ յաճախ պատահում է, որ ընկերական հաւաքներում, յիշելով օրւայ դժւարութիւններն ու չարիքները մէկը հոգոց է հանում ու ասում՝

-Յոյս չկայ:

Ու այս չորս տարւայ ընթացքում յուսահատը խրախուսւում է այսպէս՝

-Յոյս կայ, առնազն երկու շաբաթ մէկ:

# ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՐքԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

## Հատւած Երեւանեան իմ Յուշատետրից

Նիկիտ Միրզայեանց

Մանկութեան յուշերս մինչ հիմա էլ ինձ հանդարտ չեն տալիս եւ մղում են ինձ դեպի նորանոր բացայայտումներ՝ թիֆլիզահայ Զաղեթեան գերդաստանի մասին։ Տասու Մաշա Միրզայեանցը /Զաղեթեան/, ով իմ մանկութեան տարիները յաճախ եղել եմ իր խնամքի ներքոյ, պաշտում էր Յ. Թումանեանին եւ ինձ համար պարբերաբար ընթերցում էր նրա մանկական բանաստեղծութիւններից եւ հեքիաթներից, մանաւանդ «Շուն ու կատուն», «Զարի վերջը», ...այն էլ իր ծոխացրած ու ազդեցիկ արտասանութեամբ։ Նա միշտ կարօտով էր յիշում իրենց բնակարանը Թիֆլիզում որը գտնում էր Թումանեանի բնակարանի հարեւանութեամբ նոյն փողոցում, եւ որ ինչքան մտերիմ էր Թումանեանի դստեր՝ Նւարդի թէ Արփիկի հետ, /յիշողութիւնս թոյլ չի տալիս/ եւ Թումանեանը, երբ ամէն օր անցնում էր այդ փողոցով, տասու ինչպիսի հիացմունքով էր նայում այդ բարի եւ Մեծ բանաստեղծ ՄԱՐԴՈՒ։

Յազի 11-12 տարեկան երեխայ էի, երբ տասու վախճանեց 1965-ին, եւ այսպիսով միայն մոխրացած յուշեր մնացին ինձ համար, եւ տատիս ընտանիքի նկատմամբ կարօտս, վերածնեց կարօտախտի։

2009-ի ամռանը, երբ ես Երեւանում էի, որոշեցի փնտրել եւ գտնել Զաղեթեան ընտանիքից որեւէ մէկին, կարծես ինչ-որ առաքելութեամբ էի ուղղորդել դէպի Երեւան։ Միակ տևալը, որ ունի, գիտի որ Յայաստանի Յանրապետութեան



թղթադրամի /1918-20/ վրայ դրոշմած ստորագրութիւններից մէկը պատկանում է Գրիգոր /Գրիշա/ Զաղեթեանին, ով տատիս աւագ եղբայրն էր եւ զոհիել էր ստալինեան վարչակարգի ժամանակ, 37-ին։

Զարմացած էի, թէ ինչպէս կարելի է, որ նման մի ընտանիքի մասին ոչ մի գիրք, ոչ մի յուշ գրիած չլինի, միգուց ես տեղեակ չէի։ Մի օր էլ հանրայայտ Վեռնիսաժում, հաստատակամ ու սեւեռամիտ ծեմելիս, մտքերիս կիզակետն էի դարձել «Զաղեթեան» ազգանունը, եւ անցնում էի այն մասով որտեղ վաճառւում էին հնատիպ գրքեր ու թղթադրամներ, լուսանկարներ։ Վեջապէս մի պահ կանգ առայ նրանցից մէկի մօտ եւ հարցրի։

-Այս թղթադրամի վրայ ստորա-

գրող Զաղեթեանի մասին որեւէ տեղեկութիւն ունէք։

Հաստ ջերմ պատասխանեց, -Բա ո՞նց, ես նրա բոռան հետ լաւ ընկեր եմ, Գրիշան հիմա Մոսկվա է բնակում։ Եւ իրաշքը պատահեց... Եւ հեռախոսի համարներ փոխանցւեց, եւ զտայ Զաղեթեաններից ոմանց, որ Երեւան էին բնակում։

Նրանցից մէկը եղաւ Նիկոլ Սարգսեանը, հիանալի մի մարդ, որ տատիս աւագ քրոջ՝ Սարենիկ Զաղեթեանի թռուն էր։ Յանդիպեցինք, յուզեցինք, խմեցինք, եւ երկար զուցեցինք։ Պատմեց յուշեր Զաղեթեան գերդաստանի մասին՝ ըստ Սարենիկի, այնքան բազմաբովանդակ եւ հետաքրքիր, որ ես տեղումն գանած ու շշմած համակ լռութեամբ՝ կարծես իրական պատմութեան լսարանում էի գտնուում։ Արդէն ամէն օր Նիկոլի մօտ էի եւ կարծես նա այդ յուշերով, բուժում էր իմ կարոտախտը տատիս ընտանիքի նկատմամբ։ Խնդրեցի իրեն, որ գրի առնի այս բոլորը, բայց պատասխանը եղաւ, «էի...հաւաս չունեմ Նիկիտա ջան»։

Այդ հետաքրքիր յուշերից մէկը եղաւ, Ալեքսանդր /Սաշա/ Զաղեթեանի նիկուրեան օգնութիւնը Յ. Թումանեանին հրատարակելով նրա բանաստեղծութիւնների գիրքը։

Ուրեմն տատիս հայրը՝ Ալեքսանդր Զաղեթեանը, եղել է Թումանեանի առաջին գրքի լոյս աշխարհ բերողը, հետեւեալ անձնագրով։

«Յ. Թումանեան, ԲԱՍԱՍԵՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ՄՈՍԿՈՒ, ՏՊԱ-



## ՐԱՆ

Մ.ԲԱՐԽՈՎԻ ԱՆԴՐԵԱՍԻ,  
1890, Գիլն է 35 կող.»

Այսպէս մի օր էլ Թումանեանը որոշում է որպէս երախտագիտութիւն, գիրքը նւիրել Զաղէթեանին, այս նպատակով նոյն գրքի շապիկը, շրեղ ոսկեզօծ նախշազարդերով կազմած, յատուկ պատրաստել է տալիս եւ նւիրում Ա.Զաղէթեանին, հետեւեալ մակագրութեամբ՝

«Մեծարգոյ պ.Աղեքսանդր Զաղէթեանցին / նւէր / հեղինակից /93 .6.24/թիժլիզ»

Զաղէթեանը տեսնելով այդ գիրքը եւ իմանալով Յովհաննէսի տնտեսական ոչ բարտօք վիճակը, նեղանում է եւ կշտամբելով ասում նրան՝

«Այ մարդ, իմ կարիք կար այսրան փող ծախսեիր այս մի օրինակ գրքի համար»:

Ըստ Նիկոլի, այս գիրքը, Սարենիկը յանձնած է Եղել Թումանեանի տուն-թանգարանին :

Ես որոշեցի տեսնել այդ գիրքը անձամբ, բայց աւաղ, որ նոյն օրը երեկոյեան պիտի մեկնէի Պարսկաստան, լուրը փոխանցեցի իմ լաւ բարեկամ, մեծ բանասէր, Բախստիար Յովհակիմեանին, խնդրելով ճշտել Եղելութիւնը: Ինձ զանգեց եւ ցաւով յայտնեց որ, հեռախօսով իրեն տեղեկացրել են, որ նման մի գիրք գոյութիւն չունի:

Չատ էի հիասթափւել, եւ վատատեսութեամբ տրամադրւել Հայաստանի բոլոր թանգարանների նկատմամբ, մինչեւ 2010-ի ամռանը, երբ նորից Երեւանում էի:

Վերջապէս Նիկոլի հետ



որոշեցինք միասին ներկայ լինել Թումանեանի տուն-թանգարանում, եւ մօտիկից հետամուտ լինել հարցին: Մեր ուրախութեանը սահման չկար, երբ տկն.Մարինէ Բաղդասարեանը, թանգարանի գլխաւոր ֆոնդապահը մեզ ցուցադրեց գիրքը, իհարկէ լսելով Նիկոլի փաստացի բացատրութիւնները եւ տւեալները այդ գրքի մասին: Յետոյ նա մեզ ներկայացրեց տկն.Նարինէ Խաչատրեանին, թանգարանի գլխաւոր տնօրէնին, պատմելով Եղելութիւնը: Այդ բարեհամբոյր կինը, որ ինձն էլ հետաքրքրած էր Սարենիկ Զաղէթեանի կեանքի տւեալներով, հմարաւորութիւն ընձեռեց մեզ, որ ապագայում Թումանեանի դրւստրերի լուսանկարների ալբոնը մօտիկից նայենք եւ եթէ Մաշայից կամ Սարենիկից որեւէ լուսանկար գոյութիւն ունի, լուսաբաննենք: Մեծ հաւատքով ու լաւատեսութեամբ լիցքաւորուած, հրաժեշտ տիկնք նրանց ու հեռացանք: Անկեղծ ասած, ես ինձ շատ հպարտ էի զգում, ախր տատիս ու Նիկոլի յուշերը արդէն իմ համար բացարձակ իրականութիւն էին:

Փառք ու պատիւ Ալեքսանդր Զաղէթեանին՝ Ամենայն Հայոց Բանաստեղծի առաջին գիրքը լոյս աշխարհ բերող՝ Կնքահայրին:

Ն.Զուղա, Մայիսի 26,  
2011թ.

# ԴՈԿՏՈՐ ՋԵՐՈՐԴԵԱՆԻ ՄԱՆ

Ուրբաթ Յունիսի 3-ի առաւտեան Դեթրոյի հիւանդանոցում մահացաւ «Դոկտոր Մահ» մականունը ստացած հայազգի բժիշկ-գիտնական Զեք Գեւորգեանը: 83-ամեայ նախկին բժիշկը հիւանդանոց էր տեղափոխւել Մայիսի 20-ին՝ թոքարորով եւ երիկամների հիւանդութեամբ: Նա էֆքանազիայի կողմնակից էր, իր ողջ կեանքի ընթացքում աջակցել է էֆքանազիայի օրինականացման գործընթացին եւ օգնել անբուժելի հիւանդներին՝ հեռանալ կեանքից: Այդպէս նա վարւել է 130 մարդու հետ: Սակայն «Դոկտոր Մահ»-ին մեղադրանք առաջարիելու հնարաւորութիւն իրաւապահները ստացել են միայն 1999 թւականին՝ նրան մեղադրելով երկրորդ աստիճանի ուղղակի սպանութեան մէջ: Այդպիսի հնարաւորութիւն իրաւապահ մարմինները ստացել են այն բանից յետոյ, երբ իրենց ծեռքն է ընկել 52-ամեայ Թոնաս Եօրքի ինքնասպանութեան տեսագրութիւնը: Դատարանի վճռով Զեք Գեւորգեանը դատապարտւել է 25 տարւայ ազատազրկման: Սակայն 2007 թւականին Միչիգան նահանգի համաներման խորհուրդը որոշել է ազատ արձակել 79-ամեայ բժշկին, քանի որ սկսել էր վատթարանալ նրա առողջական վիճակը: Բացի այդ, խորհուրդը համոզւած էր, որ «Դոկտոր Մահ»-ն այլևս չի կարող սպառնալիք



ջանում էկրան բարձրացաւ «Դուք չեք ճանաչում Ձեքին» ֆիլմը, որը պատմում էր հայազգի «Դոկտոր Մահ»-ի մասին: Նրա կերպարը մարմնաւորել է յայտնի դերասան Ալ Պաչինոն:

Նա նաեւ HBO հեռուստաընկերութեան մի վաւերագրական ֆիլմի հերոսը դարձաւ: 90-րոպէանոց «Գեւորգեան» ֆիլմը ներկայացնում է 82-ամեայ բժշկի կենսագրութիւնը, այդ թուուն բանտուն անցկացրած 8.5 տարիները: Զեք Գեւորգեանը խոստովանել էր, որ վախենում է մահիանից: «Կարծում եմ, ես վախենում եմ մեռնելուց՝ ինչպէս եւ բոլորը», - ասել է Գեւորգեանը:

«Եթէ մենք օգնուն ենք մարդկանց աշխարհ գալ, ինչո՞ւ չենք կարող օգնել նրանց հեռանալ աշխարհից», - ընդգծել է Զեք Գեւորգեանը:

Աներիկահայ բժշկը ասել է, որ չի ափսոսում որեւէ բանի, նոյնիսկ 1998 թւականին անբուժելի հիւանդ Թոնաս Իւկի «Երկրորդ աստիճանի սպանութեան» մեղադրանքով ազատազրկման դատապարտւելու համար:

Նշելով, թէ ազատազրկման մէջ որոշ պահեր իր համար տանջանք էին, «Դոկտոր մահը» յաւելել է. - «Ի ՞նչն է ամենաանտանելին բանտում՝ խռնիոց լսելը»:


Ներկայացնել հանրութեան համար: Նշենք նաեւ, որ վերջին շր-

# ԱԼԲԵՐԹ ԲԵԳԻՉՅԱՆԵԱՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄ ԵՒ ՊԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ԹԱՏՐՈՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆՈՒ

Մայիսի 30-ին եւ 31-ին, Յայ Յամալսարանականների Ընդհանուր միութեան դահլիճում բեմադրւեց Նասիմ Սոլեյմանփուրի գրչին պատկանող «Սպիտակ նապաստակ, կարմիր նապաստակ» թատերգութիւնը՝ Ալբերթ Բեգիջանեանի բեմադրութեամբ: Իհարկէ, քառիս բուն իմաստով, ոչ բեմ կար (հանդիսատեսի մակարդակից անելի բարձր հարթակ), ոչ լուսաւորում եւ վարագոյր, եւ ոչ էլ այսպէս կոչւած չորրորդ աննշմարելի պատ, այսինքն այսպիսի ենթադրութիւն, որ իբր թէ դերասանները չեն տեսնում թատրոնի դահլիճում նստած հանդիսատեսին եւ ասես իրենք իրական մարդիկ են, որ իրենց կեանքն են ապրում: Ընդհակառակը, դերասանները հենց ընտրում էին հանդիսատեսների միջից ու բեմ բարձրանում, իսկ ի՞նչ բեմ բարձրանալ, բեմը հենց աթռուների առջեւի տարածքն էր, առանց դեկորի ու բեմայարդարման: Սյս բոլորը, ի հարկէ, քանի տասնամեակներ է, որ ժամանակակից թատրոնում դադարել են նորարութիւն համարելուց, բայց մեր միջավայրում, ուր ընդհանրապէս դեռ թատրոն համարում է միայն 19-րդ դարի դասական թատրոնը, այս բոլորը տարօրինակ ու անսովոր է երեւում: Տարօրինակ է նաև մի պարսիկ ժամանակակից թատերագրի գործի թարգմանութիւնը եւ բեմադրութիւնը հայկական միջավայրում: Ալբերթ Բեգիջանեանին մեր շնորհակալութիւնը պիտի յայտնենք այս տարօրինակ քայլերի համար: Սակայն ... Ասացինք բեմ չկար, այսքանը լաւ, բայց չկար նաև բեմադրութիւն, որն այլեւս լաւ չէ: Ասացինք դերասանները հենց հանդիսատեսներն

էին, սակայն թատերգութեան, աւելի յստակ ասնեք՝ մենախօսութեան, միակ կերպարի դերում կատարող դերասանը, որն հենց ինքը բեմադրիչ Ալբերթ Բեգիջանեանն էր, այնքան էլ դերասանութիւն չէր անում: Բնականի ու սովորականի մակարդակից չքարձրանալով, դժվար է պահպանել հանդիսատեսի հետաքրքրութիւնը, յատկապէս երբ չկայգեցնեցիկ լուսաւորում, բեմայարդարում, զգեստաւորում, երաժշտութիւն եւ այս ամենի բեռք պիտի կրի դերասանական արւեստը: Այս մէկն էլ զեղչելով, էլ շատ բան չի մնում հետեւելու: Իսկ միզանսեն-ի՝ բեմի իրերի եւ դերասանների տեղերի ու շարժումների դասաւորման արւեստը չէր օգտագործել, թատերգութեան երթեմն բարդ որութիւնները հասկանալի դարձնելու համար:

Բեմադրութեան ազդեցիկ մասերը, երբ Բեգիջանեանը, համարեան ոչինչով, մի պահ յաջողում էր գրաւել հանդիսատեսի ուշադրութիւնը, ըստ իս ապացուցում է, որ հարցը այնքան կարողութիւնների պակասը չի եղել, ինչքան տքնածան աշխատանքի պակասը, որ ամէն տեսակ արւեստի յաջողութեան առնացն 50 տոկոսն է: Գործը հեշտ վերցնել, բաւականաչափ չաշխատել, բաւականաչափ չփորձել, չխորհրդակցել, հաւաքական աշխատանքը թերազնահատել անձանք սրանք են համարում ներկայացնան թերութիւնների պատ-



ճառը: Իսկ այս բոլորը եական են, յատկապէս եթէ սաքուն դերասանական առաջին փորձն է: Յուսով, դրանք կը վերանան նրա յառաջիկայ ներկայացումներում: Ստորեւ վերատպում ենք «Սպիտակ նապաստակ, կարմիր նապաստակ»-ից մի հատւած, որն ուշագրաւ է հեղինակի հնարքների հանդիսատեսին թատրոնի մէջ ընդգրկելու ուղղութեամբ: Դա նաև հիանալի բացարութիւնն է թատերգութեան հեղինակի, բեմադրիչի եւ հանդիսատեսի յարաբերութիւնների:

Ո.Ս.

# ՍՊԻՏԱԿ ՆԱՊԱՏԱԿ, ԿԱՐՄԻՐ ՆԱՊԱՏԱԿ



Ես պատմութիւնը 3-4 կարեւոր կետ ունի, որը ժամանակին կը բացատրեմ: Բայց սկզբում վատ չէր լինի ինքս ինձ ներկայացնեմ: Անուն Նասիմա, ազգանունս Սոլյեմանփուր...ինչպէ՞ս ասեմ, ես... Անկեղծ ասած խոջի խայթ ունեմ: Ես ի՞նչ եմ անում ձեր հետ: Վախենում եմ: Որոշ բաներ կան, որ ստիպած եմ բացատրել: Վատ չէր լինի մէկը խօսքերս գրի առներ: Որովհետեւ կարողա ապագայում պէտք լինեն: Երեւէ մէկը թուղթ ու գրիչ ունի՞: Մէկը բոլորի համար գրի:

Շնորհակալ եմ: Նախ «Ես» բառը բացատրենք: «Ես» բառը տարբեր տեքստերում երկու կիրառում ունի: «Ես» ասելով կամ պատմիչին է ակնարկում, կամ էլ ուղղակի «Ես» ասողին: Բայց էս պիեսուն եղան չի: Ես օգտւելով «Ես»-ը, նպատակ չունեմ անհատականացնեմ մէկին, որը իրեն նկատի ունի: Երբ ասում եմ «Ես», նկատի չունեմ են մարդուն, որը որպէս դերասան կանգնելա ձեր դիմաց: Այսինքն՝ հենց այն մարդը, որ արտասանումա էս տողերը:

«Ես» ասելով ես ինձ մկատի ունեմ: Ես որպէս գրող: Են «Ես»-ը, որը գրումա էս տողերը: Ես իմ մտային աշխարհում որեւէ բան են գրում: Պիեսի նման մի բան: Մի համակարգ կազմած գործողութիւններից, տեսարաններից ու խօսքերից, որոնց արտասանելը ձեր դիմաց կանգնած դերասանի պարտականութիւննա: Իրականում էստեղ պայմանագիրա ստո-

րագրուում: Ես իմ բառերը կիսում եմ ձեր դիմաց կանգնած մարդու մարմնի հետ: Խօսքը ինձնից, մարմինը նրանից: Զգիտեմ հասկանո՞ւմ էք թ՞է չէ:

Տեսէք, իմ անունը Նասիմ Սոլյեմանփուր: Չնայած որ Նասիմ անունը իգական էլ կարողա լինի, ես տղայ եմ: Բայց էն անձնաւորութեան անունը որը ձեզա պատմում էս տողերը, ես չգիտեմ: Ինքը աղջիկա՞ թէ՞ տղայ: Ես ծնւել եմ Թեհրանում՝ 1363 թի Ազարի 19-ին: Փրկչական տոմարով կը ստացի «Թեհրան, 1981, Դեկ.10»: Ես իրանցի եմ եւ դրանից ոչ ուրախ եմ եւ ոչ էլ մեղլում եմ:

Լաւ, մի հոգի ինձ ասի՝ եսօր քանիշաբթիա՞: Յամար 6, խնդրում եմ կանգնիր եւ պատասխանիր իմ հարցերին: Շնորհակալ եմ: Ասացիր ի՞նչ օրա: Իսկ թւակա՞նը: Խնդրում եմ աւելի բարձր: Այ իիմա եղաւ: Կարող ես նստել: Բայց իմաս, որ էս տողերը գրում եմ, 1389 թի Ֆարւարդինի 6-նա: Փրկչական տոմարով 2010 թի Մարտի 26-ը: Տեսնո՞ւմ էք: Անզան իմ ժամանակը ձերից տարբերա: Ես անգամ չգիտեմ դուք ինչ տարրում եւ ինչ օրում էք հանդիպում իմ ես տողերին: Ես չգիտեմ եւ չսիմանալով աւելի գրաւիչ էք դառնում: Դուք գիտէք, եւ այսպէս ուրեմն ինձ հետաքրքրում էք:

Յիմա, երբ գրում եմ ես տողերը:

Շիրազում եմ: Յենց էնտեղ, որտեղ Պերսպոլիսնա, Յաֆեզն ու Սաադին են, եռամի այգինա ու նարինցի ծառերը եւ էնքան մօտա, որ կարող եմ ձեռքս երկարացնեմ եւ մի հասած նարինց պոկեմ: Շիրազը ինձ համար դրախտից պոկւած մի կտորա: Դրա համար էլ որոշեցի վերջին գործս հենց էստեղ, ծնողներիս մօտ գրեմ: Տեսնո՞ւմ էք: Անզան իմ գտնւելու վայրնա տարբերուում: Ես նոյնիսկ չեմ իմա-

## Նասիմ Սոլյեմանփուր

նում, որ դուք որտեղ եք, երբ հանդիպում էք իմ բառերին: Ես չգիտեմ եւ էս չիմանալով աւելի գրաւիչ էք դառնում: Դուք գիտէք, եւ այսպէս ուրեմն ինձ հետաքրքրում էք:

Յիմա, երբ գրում եմ ես տողերը, 28 տարեկան եմ: Արեանս խումբը O+ ա, հասակս 168սմ., 76 կիլո են կշռում եւ վարսավիրանոցի յատակին կպաշ ծամոնի նման նազուտ եմ: Եթէ ուզում էք ինձ պատկերացնել, ես դեղնաւուն եմ, մազերս սեւ են, աչքերս շազանակագոյն եւ հաստ ունքեր ունեմ: Յիմա դուք պատկերացնում էք ինձ: Ես էլ ձեզ եմ պատկերացնում: Կարեւոր չի քանի տարի յետոյ էս թատրոնի հանդիսատեսը կը լինեք, կարեւոր չի աշխարհի ո՛ր պոչում էք գտնուում: Որոշ բաներ երբեք չեն փոխւում: Օրինակ վստահ եմ որ առաջի շարքերում, մի թմբիկ պարունա նստած, որը բարի արջ ա յիշեցնում: Կամ սրահի վերջում մի շատ գեղեցիկ օրիորդա կայ, որ հենց իրան նայես կը ժպտայ: Չէ՞ր հաւատում: Շրջւէք եւ կը հանովէք: Յիմա դու զոռով ժպտա, որ ասեն շատ սիրուն ես: Ես պիես եմ գրում: Ես իմ ժամանակում եւ իմ վայրում մի պիես եմ գրում ու իմ մտային աշխարհի մի անկիւնում պատկերացնում են ձեզ եւ կապ եմ ստեղծում ձեր հետ:

Բայց պատմութիւնը ևստեղ չի աւարտուում: Ես կապը միջնորդա պահանջում: Յիմա միջնորդի իմաստը կը բացատրեմ: Եթէ դուք կարդում էք էն ինչը, որ գրել եմ, իմ ու ձեր միջնորդը թուղթնա կամ համկարգիչը, կամ էլ ցանկացած նմանատիպ միջոց: Աւելի պարզ ասած ես ջայլամ եմ եւ դերասանութիւն չեմ անում՝ ես կամ, որովհետեւ ես իմ էութիւննա: Եթէ դուք դահլիճում էք եւ մի հոգի բեմից



